ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Յունիսի 7-ին, կիրակի օր, երեկոյեան ժամ 7-ին Թիֆլիսի քաղաքային տան դահլիճում կայացաւ առաջին նախապատրաստական ընդհանուր ժողովը փչեալ ընկերութիւնը հիմնելու մասին խորհրդակցելու համար։ Ժողովը գումարուել է ՐՐաւէրքով ամագրիս խմբագիր Աւետիք Արասխանեանցի, պ. Սմբատ Շահազիզի հետ նախապէս համաձայնութիւն կոյացնելուց յետոյ։ Ժողովին ներկայ եղան 72 հոգի երկու սեռից, որոնց մէջ ամենամեծ մասը Թիֆլիսում ներկայ գտնուող գրականագէտներն էին, մնացեալները՝ մարդիկ, որոնք ցանկութիւն ունեն նպաստել ընկերութեան հիմնելուն։ Նիստը բացելուց առաջ ժողովի գումարողը ճառ խօսեց, որի մէջ նա, տեսութեան առնելով հայ գրական դասակարգի կազմակերպելու ընթացքը այս վերջին 30—35 տարիներում, լայտնեց այս միտքը թէ գրական դասակարգը պէտք ունի երեք տեսակ հաստատութիւնների. մէկը՝ դասակարգի պատիւը պահպանող—ընկերական դատաստան, միւսը՝ դասակարգի մտաւոր զարգացմանը նպաստող՝—գրականական և գիտական ընկերութիւններ և երրորդ՝ դասակարգի նիւթական ապահովութիւնը հոգացող՝—գրականագէտների օգնելու ընկերութիւն կամ գրականական ֆոնդ։ Այժմ այս վերջին խնդիրն է ամենից հասունացել, որի իրագործմանը մեծապէս նպաստել է պ. Շահազիզը, որի լօբելեանի հետ կապուած է եղել ապագայ գրականական ֆոնդի օգտին նէյրներ ժողովելու միտքը։ Բայց այդ գրականական ֆոնդի հիմնելը զարկ կը տայ միւս վերը լիշած հիմնարկութիւնների հաստատելուն և նոյն իսկ այն ընկերութեան կանոնադրութեան մէջ կարող են մտնել լօգուածներ, որոնք առնչութիւն կ'ունենան նոցա հետ։

Ժողովը միաձայն ընդունելով Գրականագէտներին օգնելու ընկերութեան հիմնելու անհրաժեշտութիւնը և այդպիսով ժողովը կայացած ճանաչելով, ընտրեց ընդհանուր ժողովի նախագահ (Ա. Արասխանեանցին) և քարտուղար (Յովհ. Թումանեանցին). ապա կարդացուեց հայր Սարգիս Բէգնազարեանցից ներկայացրած մի գրութիւնը, ուր նա խօսում է հիմնելիք ընկերութեան օգտակարութեան մասին, յետոյ հաղորդուեց

պ. Ստեփան Մալխասեանից Ախալցխայից տացած հեռագիրը ժողովի բարեյաջողութեան մասին, ժողովի համաձայնութեամբ նախագահը ծանօթացրեց ուսց գրականագէտներին օգնելու ընկերութեան 1859-ին հաստատուած կանոնադրութեան գլխաւոր յօդուածների հետ և ապա ժողովը անցաւ կանոնադրութիւնը մշակելու համար մասնաժողով կազմելու գործին։ Պր. Սմբատ Շահազիզը, ի նշան պատուի, առանց քվէարկութեան ընտրուեց մասնաժողովի անդամ։ Թերթիկներով քվէարկութեան ենթարկուեցին և ընտրուեցին հետևեալ 5 անձերը որպէս մասնաժողովի անդամներ.

Արասխանեանց, Աւետիք	44	ձայնով
Սարգսեանց, Լեոն	38	»
Վարդանեան, Փիլիպպոս	36	»
Բալանթար, Ալեքսանդր	29	»
Բարխուդարեանց, Արշակ	28	»

Քվէարկութեան ժամանակ ներկայ էին 66 հոգի, որոնցից ժողովի նախագահը և քարտուղարը ձեռնպահ մնալով քվէարկութեան մասնակցեցին 64 հոգի։

Ժողովը լանձնարարեց նախագահին հեռագիր ուղարկել պ. Շահազիզին, շնորհաւորելով նորան գործի լաջող սկզբնաւորութեան համար։

Նիստը փակուեց ոսոի կանգնելով լարդելու համար հանդուցեալ Պետրոս Աղամեանի վիշատակը, որը նոյնպէս մի գրականագէտ էր և որի մահուան տարելիցն էր այդ օրը։

ԼՈՒՍԻՆԻ